

Ասոնք ի՞նչ գործ ունէին Վերսայլի մէջ, կարելի չէ որոշ բան մը ըսել:

Բայց հետաքրքրական է դիտել տալ, թէ 1683ին Յրանսա կը գտնուէր նաեւ Իսրայէլ Օրի, որ 12 տարի (1680—1692) ծառացած է Ֆրանսական բանակին մէջ և որ, ինչպէս յայտնի է, մասնաւոր ծրագիրներ ունէր իր միտքին մէջ:

Այդ միջոցին հոն էր նաեւ Սանի անուն հայ մը, որ 1669ին Փարիզ գացած էր հայ վաճառականներու հետ, ինքզինքը պարսիկ ներկայացնելով: Անիկա ընդունուած էր Յրանսայի արքունիքին մէջ և չէր վարանած կեղծիքով քրիստոնէութիւնը նոր ընդունած ցոյց տալ ինքզինք, Օրլէանի դուքսին կընթահայրութեամբ մկրտուելու և անոր անունով Ֆիլիբ կոչուելու: Այս արկածախնդիր խաբեբան օգտագործած էր Լուի ԺԴ.ի (1643—1715) արքունիքին Արեւելքի հանդէպ ցոյց տուած շահագրգռութիւնը, ինչպէս և իր երիտասարդութիւնը, դիրք շինելու համար ամուսնանալով նշանաւոր ճանապարհորդ և արեւելեան երկիրներու խուզարկու թավէրնիէի պառւած և տգեղ քոթ չեա, զոր չխղճահարեցաւ յետոյ լըքել, վերամուսնանալու համար Շուէտի արքունիքէն օրիորդի մը հետ:

Անիկա Մոսկուայի և Գերմանիոյ մէջ ալ խաչագողական ձեռնարկներ ընելէ ետք, հուսկ ուրեմն կը ձերբակալուի Էրզրումի մէջ՝ անգլիացի վաճառականի մը ի վնաս գործած խարդախութիւններուն համար (իր կեանքին մանրամասնութիւններուն համար տես J. Mathorez, *Revue des Etudes Arméniennes*. 1922 T II. 1. էջ 86—87)(1):

(1) Ինչպէս Հայեր՝ նոյնպէս օսմանական բախսա-